



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, և 9-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով, որ ժամկետը լրանալու հիմքով դադարել է Պալատի երիտասարդական խորհրդի անդամներ Նազիկ Մալխասյանի և Միքայել Ահարոնյանի լիազորությունները, և 2022 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից թափուր մնացած տեղերը համալրելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով փաստաբաններ Արև Հարությունյանի և Կարեն Առաքելյանի համաձայնությունների առկայությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամներ նշանակել փաստաբան **Արև Հարությունյանին** (արտոնագիր՝ թիվ 3244)՝ և **Կարեն Առաքելյանին** (արտոնագիր՝ թիվ 3262) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան

27 հունվար 2023թ.
թիվ 30-Ա
ք. Երևան